

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. Յանգը, Տունը, Հանգիստութիւնը
Նարեկացու Ստեղծագործութեան

Դրականութեան տեսութեան մէջ յանգ կոչուում է ուսանաւորի մէջ «տողերի համահնչին վերջաւորութիւնը, որ կրկնուում է երկու կամ ւաւի անգամ»(1): Յանգն ընդգծում է տողերի ռիթմական աւարտը. տունը եւ տողերը կապում է միմեանց, խօսքին հաղորդում է երաժշտականութիւն: Յանգը յայտնի է թէ հեմագոյն ժողովրդական երգերից եւ թէ գրական ստեղծագործութիւններից: Այլ հարց է, որ յանգի կանոնաւոր գործածութիւնը գերակշռու է դարձել ւաւի ուշ:

Ընդունուած է ասել, որ յանգի գործածութեանը հայ գրականութեան մէջ առաջին անգամ գիտակցաբար դիմել է Գրիգոր Նարեկացին: Իսկապէս, ինչպէս արդէն ասուել է, Նարեկացին Մատենաւում յամայն է դիմել ամենաբազմազան յանգերի կիրառութեան: Ասուել է նաեւ, որ Մատենան Ձերդ գլխում Նարեկացին խօսում է յանգերի յուզական ներգործութեան մասին՝ յենուելով ժողովրդական ողբի արուեստի վրայ: Նարեկացին բացատրում է, որ լայականները ողբի մէջ տողերն աւարտում են նոյն հնչիւնի կրկնութեամբ՝ սրտերն առաւել յուզելու եւ աչքերից ւաւի արցունք փամփու համար:

Յանգի պատմութեան վերաբերեալ միշտ տեսակէտ ունի Վ. Ներսիսեանը: «Յանգը - գրում է նա - հայ բանաստեղծութեան մէջ վերջնականապէս հաստատուել է Արդ դարի սկզբներից: Մինչ այդ, մեր բանաստեղծութիւնը հիմնականում եղել է անյանգ: Բայց ինչպէս ամեն մի երեսոյթ, այնպէս էլ յանգը միանգամից երեւան չի եկել, այլ ծագել ու կազմաւորուել է չափածոյ խօսքի ռիթմիկ զարգացման

պահանջով, ապրելով ձեւաւորման երկարաձիւ պրոցես:

«Ի գուր չէ, որ յանգաւորման որոշ երեսոյթներ նկատուում են եւ հեքամոսական շրջանի երգերից մնացած փշրանքների, եւ 5-10-րդ դարերում յօրինուած հոգեւոր ու աշխարհիկ ստեղծագործութիւնների առանձին մասերում»(2):

Աս կարեւոր դիտողութիւն է: Ինչպէս հայոց հին, այնպէս էլ Յունա-Հռոմէական անտիկ բանաստեղծութիւնն անյանգ էր: Բայց յանգը իբրեւ մարտասանական խօսքի զարդ՝ յայտնի էր արձակում: Յանգը ստեղծում էր արտայայտչական համեմի զուգահեռականութիւն: Նման համահնչունութիւն յանախակի կիրառել է Յովհան Մայրաբաժնեցին իր նաոներում, այսպէս, օրինակ՝ «Ջերբան իմ բամբասամօք պղծեցի, եւ զլեզու իմ դատար բանիւք աղոթեցացուցի»: կամ «Մարմնովս զուզացն ծանիցուք, եւ երեսիեանս զաներեսոյթն գիտասցուք»(3): Ի հարկէ, բուն իմաստով, սա յանգ չէ: Բայց յանգ եղել է ժողովրդական եւ թէ՛, մասամբ հոգեւոր երգերի մէջ: Ահա թէ ինչու Արեղանի այն ենթադրութիւնը, թէ «Հաւանաբար արարական բանաստեղծութիւնից է անցել հայերէնին եւ յանգը, որի գործածութիւնը չկայ մեր հոգեւոր երգերը մէջ»(4) եւ թէ «Նարեկացու Ողբերգութիւնից իմանում ենք, որ 10րդ դարում արդէն յանգի գործածութիւնը եղել է մեր աշխարհիկ բանաստեղծութեան մէջ»(5), կարօտ է նշգրտման: Հայերը, ինչպէս նաեւ յոյները եւ եւրոպական միւս ժողովուրդները, յանգը չեն վերցրել ոչ արաբներից եւ ոչ էլ մէկ այլ ժողովուրդից: Յանգը

գրականության զարգացման օրինաչափ արդիւնք է եւ առաջ է եկել ազգային բանաստեղծության դիքմական հմարաւորութիւնների բնական տարբերից:

Նարեկացին համարեղ բանաստեղծ էր, եւ բնական էր, որ հայ իրականութեան մէջ առաջինը նա զգար յանգի նշանակութիւնը բանաստեղծութեան յուզականութեան, զգացմունքային լարուածութեան բարձրացման գործում: Թէեւ Նարեկացու ստեղծագործութիւնն ընդհանրապէս ունի խառն ու ազատ տողերի համակարգ, իսկ յանգի զարգացումն աւելի շուտ կապուած է կանոնաւոր տողակարգ ունեցող ոտանաւորի հետ, այնուհանդերձ, Նարեկացու յանգաւորման արուեստն առանձնանում է բարձր վարպետութեամբ: Նա ուղեւնշել է միջնադարեան տաղերգութեան յանգաւորման գրեթէ բոլոր տեսակները: Նոյնալանգութիւնը մեծ տեղ ունի տաղերգութեան մէջ: Նարեկացին տուել է նոյնալանգութեան բազմաթիւ օրինակներ եւ յաճախ նրա օգտագործած նոյն յանգերին եւ դիմել թէ՛ Գրիգոր Մագիստրոսն ու Ներսէ Շնորհալին, թէ՛ Ֆրիկն ու Կոստանդին Սրգնկացին եւ հետագայ տաղերգուները:

Նարեկացու նոյնալանգ հատուածները հասնում են մի քանի տասնեակ տողերի, մինչդեռ նրա յետորդները՝ Մագիստրոսը, Շնորհալին, Սիւնեցին, Բաղդեցին, եւ այլն, ունեն նոյնալանգ հարիւրաւոր տողեր: Նարեկացին կանխում է միապաղաղութեան ձանձրոյթը: Ի յանգով գրուած ամենածաւալուն մասը՝ ԻԶ գլխի ք, գ, դ հատուածները միասին, բաղկացած է 64 տողից: Ըստ որում 40 տող ունի տաղաչափական մէկ կառուցումով, գրուած է հիմնականում հայրենի չափով, իսկ 24 տող գրուած է հիմնականում 20-վանկանի հնգաչանկ շառանդաւ չափով, ուր երկու դէպքում էլ վանկերի անհասարարութիւնը անդամների մէջ հաւասարուում է

ամանակով: Այնուհետեւ, չնայած բոլոր տողերն աւարտում են չ յանգով, բայց միշտ չէ, որ թոյլ յանգը յաջորդում է թոյլին, այլ կան նաեւ ուժեղ յանգեր՝ կից կամ խաչաձեւ, որոնք հեշտութեամբ ցրում են նոյնալանգութեան միօրինակութիւնը: Ահա, օրինակ՝

Անքերեռոյք կրակարան տապոյ
բորբոքմամբ մեծաւ անգովանալի,

Անտեսական իմն քրայս հալոցաց
սաստիկ եռացմամբ անշիջանելի,

Սլաքս մետից պատկանեալ դեղովք
ի շտեմարան խորութեան սրտի,

Խիթք ցաւոց խոցոտման մահու ի
գնացս երակաց գոյութեան լերդի:

(Բան ԻԶ,գ)

Միջնադարում խիստ յարգի էր դերբայական -*եայ* յանգը: Մատենանի ԻԳ գլխի մի հատուած, 42 տող, գրուած է այդ յանգով: Բայց եթէ Շնորհալին, օրինակ, այդ յանգը կիրառել է 8-վանկանի կարթ տողերի մէջ, ապա աւելի ցայտուն է զգացում յանգի յանախականութիւնը եւ անխուսափելի տաղտուկ է յարուցում, մինչդեռ Նարեկացին այդ յանգը գործածել է հիմնականում հայրենի տողակարգում, ուր յանգը հնչում է աւելի տեղին ու բնական: Նոյն յանգով է գրուած նաեւ ԻԵ գլխի դ հատուածից 18 տող, ուր 20 վանկանի տողի մէջ առաւել ազատ է ծաւալում նոյնալանգութիւնը՝ առանց դուրս-իմէ միօրինակութեան:

ԻԴ գլխի ա (10 տող) եւ ք (18 տող) գրուած են բայի սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակի առաջին դէմքով՝ -*ցայ* յանգով, այսպէս՝

Թէ փառա՞ցդ վայելութեան՝ յորմէ
գրկեցայ,

Թէ կենա՞ցդ անմահականաց՝ յորմէ
հեքիեցայ,

Թէ ընդ՝ հրեշտական պարակցու-
թեան՝ յորմէ տրոհեցայ,

Թէ ընդ արդա՞րսն մասնակցութեան՝
յորոց նեղեցայ:

(Բան ԻԴ, ա)

Առաջին երկու յանգներն, անշուշտ, հարուստ յանգեր են, եւ նման յանգերի առկայութիւնը բազմերանգութիւն է հաղորդում նոյնայանգութեանը: Ի՞նչ գլխի գ հաստուածը / 45 տող / գրուած է -աւ եւ -եաց խառն յանգաւորմամբ, որոնք փոխ առ փոխ բեքեւացնում են միօրինակութեան տպաւորութիւնը: Ի, եալ, ցալ, աւ, եաց եւ մի քանի նման ձեւեր՝ աւելի շուտ, յանգի նախնական ձեւեր են, քան իսկական յանգեր: Նարեկացին տուել է իսկական հոխ յանգերի գործածութեան բազմաթիւ օրինակներ: Տաղերգութեան մէջ սակաւադէպ է -ոյս յանգը՝ կայ Ֆրիկի եւ Կոստանդին Երզնկացու մօտ: Նարեկացին տուել է այդ յանգի կիրառութեան առաջին օրինակը: ԼԹ գլխի 18 տող գրուած է այդ յանգով, այսպէս՝

Իւղընճիւղ փայտս պտղակորոյս,
Հատանելի ծառս ունայնաբոյս,
Կրկնամեծ խաւսուն տունկա անյոյս,
Ամենաշէջ երազարանս անյոյս:
(Բան ԼԹ, ք)

Բազմայանգութեան օրինակներն աւելի յաճախադէպ են մատնանում: Ոչ ոք չի անդրադարձել այս հարցին: Բազմայանգութեան քաւականին համակարգուած օրինակ է ԺԲ գլխի Գ հաստուածը, ուր -թիւնս / տխրութիւնս, / ծանրութիւնս, կրթութիւնս, հանութիւնս / յանգին յաջորդում է -մունս / ընթացմունս, գտմունս, դիմեցմունս /, իսկ սրան՝ -իս յանգը / յարկիս, տաճարիս, սենեկիս, մարդողիս /, սրան էլ՝ -ոյս յանգը / անկողնոյս, ոգոյս, մարմնոյս / եւ այլն: Նարեկացին տուել է նաեւ տողամիջի կամ ներքին յանգի կիրառութեան օրինակ՝

Մանաւանդ գի դու լոյս ես եւ յոյս,
Եւ ես՝ խաւար եւ յիմար,
Դու՝ իսկութեամբ բարի, գովելի,
Եւ ես՝ համայնին չար, ապիկար,
Դու՝ տէր ստորիցս եւ երկնից,
Եւ ես՝ անիշխան շնչոյս եւ հոգոյս,

Դու՝ բարձրեալ, ի կարեաց գատեալ,
Եւ ես՝ տաժամաւոր եւ վտանգաւոր:
(Բան ԶԳ, ք)

Ինչ խօսք, յանգը Նարեկացու ստեղծագործութեան մէջ չունի ո՛չ տաղերգութեան զարգացած շրջանի, ոչ դասական հայ բանաստեղծների եւ ոչ էլ արդի բանաստեղծների / Հ. Սահեան, Յ. Ծիրագ, Վ. Դաւթեան, Պ. Սեւակ, Գ. Սարեան, Ս. Կապուտիկեան եւ այլն եւ այլն / յանգերի հոխութիւնը, հենչեղութիւնն ու կատարելութիւնը: Նարեկացու յանգը յանգաւորման արուեստի մանկութեան շրջանի արտայայտութիւնն է եւ իբրեւ կիրառութեան առաջին օրինակներ՝ ունի ինքնատիպ գեղեցկութիւն:

Տու՛նը բանաստեղծական երկի կառուցումով միաւոր է: Նա կազմում է իմաստով եւ յանգաւորմամբ կապուած տողերի ռիթմական եւ շարահիւսական ամբողջութիւն: Բանաստեղծական տները բազմազան են ու, թէեւ ազգային ամէն մի գրականութեան մէջ նրանց տեսակները կարելի է բերել ընդհանուր յայտարարի, այսուհանդերձ, ամէն մի բանաստեղծ ունի իր նախասիրութիւնները, երբեմն էլ՝ իր իսկ ստեղծած բանաստեղծական տան ձեւը: Տու՛նը հայոց հին բանաստեղծութեան մէջ հանդէս է գալիս որպէս ռիթմիկ կազմակերպման կարեւոր գործօն: Հին բանաստեղծութիւնը երգ էր, եւ երգն ունէր իր միանման տների կառուցումով՝ ձայնեղանակին համապատասխան: Հոգեւոր երգերը, շարականները, գանձերը, տաղերը, իբրեւ կանոն՝ ունէին դարձ կամ կրկնակ, որ տալիս էր տնատնան սահմանը: Նարեկացու քերթածներն ունեն կրկնող, եռատող, քառատող, հինգատող եւ աւելի տողերով տներ, իսկ գանձերում մի դարձից միւսի միջեւ ընկած սահմանը, ուր տողաքանակը կարող է անցնել 20-ից, միայն պայմանականօրէն կարելի է տուն համարել: Երկտող տներով է գրուած

Նարեկացու «Տաղ սրբոց Քառասնից եւ այլ վկայից» քերթուածը, որի բանակապը յօդում է՝ «Գրիգորի է երգս այս»։ Ահա առաջին երկու տները.

Գունդէ՛ սուրբ վկայիցն, ի սոսկալի
պատերազմին,

Հանդիսաւորեալ հասին ի գլուխ
ասպարիսին:

Բոպէից պաշտաւն բարեմշան
երանութեամբ,

Բանաւոր գեմմունմ քղջակիզեալ
աստուածութեան:

Աւելի յստակ են տնատուած
Նարեկացու եռատող տներով քերթուած-
ները, որոնց մի մասի տնատման համար
հիմք է հանդիսացել պատասխանի ձեւը:
Օրինակ՝

ա- «Էին աշոյ աշոյ ձեռին» սկզբնատողով
տաղից.

Ծաղիկ ծոցոյ, ծոց հայրենի,
Ամպոյ նման իջեալ յերկնից,
Ձւեր իւր ի մեզ քաղցրիկ ցաւոյն:
(ԳՆՏԳ, 78)

Բ- «Աւր յառաւաւտ» սկզբնատողով տաղից.

Աւր յառաւաւտ,
Աւր յառաւաւտ մեմեալ
Իւր անձուկ ծագմամբ:
(ԳՆՏԳ, 97)

գ- «Էն՝ ի միշտ էնն անեղապէս ծնունդ»
սկզբնատողով տաղից.

Լոյսն զհիւրական ստեղծեալքն տիպ.
Պատկեր տպաւորեալ լուսոյն,
Ծածկոյ՞ հողանիւք արփիական
կերպին:

(ԳՆՏԳ, 108)

Քառատող տներով Նարեկացին գրել
է ինչպէս տաղեր, այնպէս էլ Մատենանի
առանձին հատուածներ: Քառատող տներ
ունի «Երկինքն ի յերկիրս եւ երկիրս ի
յերկինքն» սկզբնատողով տաղը եւ մի
հանի այլ փոխեր՝ «Այն փոքրիկ հաւտին

տրտմեալ», «Սեաւ եմ, գեղեցիկ», եւայլն:
Քառատող տան սահմանը յստակօրէն է
գծուած Մատենանի շատ հատուածներում
ուր այդ դերը կատարում է լամբը: Ահա
մի այդպիսի քառատող տուն.—

Եթէ լինիցի՞ խաւարասնունդս
մթացելոյ ծագման առաւաւտ

Եթէ հասցէ՞ տեսնել զտագնապալս
մշտասատոյց յեղանակս գարնանն մաւտ

Եթէ տեսի՞ց զցաւոյ անձրեւոյն
կանաչացուցանողն հոգւոց ինձ արաւտ,

Եթէ իցէ՞ արդեօք նկատել
զգագնաբեկ հերքելի ոչխարս վերստին
կամաց գթութեան քո հաւտ:

(Բան ԻԵ, դ)

Ի հարկէ, անսովոր է տողերի մէջ
վանկերի թուի այս անհասարութիւնը,
քայց իսկապէս սա քառատող է եւ խիստ
յատկանշական է Նարեկացու համար:
Անհասարար տողաբանակով տներ
խառն կարգ ունեն Նարեկացու «Այլն այն
իջանէր ի լեռնէն ի Մասեաց» եւ «Աւետիս,
մեծ խորհրդոյ, խորհուրդ ծածկեալ մեզ
յայտնեցաւ» տաղերը: Տների տողաբանակն
այստեղ տատանում է 4-12 տողերի
միջեւ: Ծաւալուն տներ ունեն գանձերը:
Նրանց տները աւելի շուտ մասեր են՝
պայմանաւորուած գանձի կրկնակով եւ
բանակապի տնագլուխ տառերով:
Նարեկացու գանձերի տողաբանակը
տատանում է 9-18 եւ աւելի տողերի
միջեւ: Դա պայմանաւորուած է նաեւ
գանձերի մէջ պատմողական տարրի
գերակշռութիւնից: Նարեկացու բոլոր
գանձերը անյանգ են եւ գրուած ազատ
ոտանաւորով: Հետագայ գանձասացները
միայն մշակեցին եւ յղկեցին գանձի
ժանրը՝ տնատման մէջ էլ հետեւելով բնա-
րական քերթուածների քառատող ծաւալին:
Պատկերացում կազմելու համար Նարեկա-
ցու գանձերի տան մասին՝ այստեղ տալիս
եմ մի օրինակ Քրիստոսի ծննդեանն ու
վկրութեանը նուիրուած գանձից.—

Իարուն Յշմարիտ, լուսոյ թագաւոր, անկէ
 եւ անսկիզբն.

*Անբաժանելի զարուբիւն, անբաժան
 միութիւն,*

*Ջոր իսկապէս ամտանելի
 զարուբեամբ յորովայնի ժուլ կրեցեր,*

*Ջոր ոչ բոցակիզեաց հուր աստուա-
 ծութեանն.*

*Մորենի անկիզբի, բարձող մեղաց,
 լուծիչ յանցանաց, սո՛ւրբ Աստուածածին,*

*Այսաւր յայրին ընծայեալ եւ ի
 մոգուցն երկրպագեալ,*

*Որք զընծայս մատուցին աստուա-
 ծութեանն խորհրդոյ,*

*Հովուացն յայտնեալ եւ ի
 խանձարուրս պատեալ,*

*Ընդ դասս երջանիկ զարացն
 երգակցեալ հողեղենքս՝*

- Փա՛ռք ի բարձունս, - ասելով
 ծնիցելոյդ ի Էէն, ամենաւրինեալդ ի
 կանայս.

Արդ, բարեխաւսեա՛ առ Քրիստոս
 թագաւորն՝

Հասանել մեզ ի յաւգնութիւն,
 աղաչե՛մք:

(ԳՆՏԳ, 182-188)

Առաջին հայեացքից կարող է թուալ,
 թէ Նարեկացու ստեղծագործութիւնը
 հարուստ չէ տների տեսակների
 բազմազանութեամբ: Բայց նա հանդէս է
 եկել գրականութեան զարգացման մի
 փուլում, երբ ինքն էր որոնում եւ բացում
 նոր ճանապարհ: Այս մօտեցմամբ նրա

ստեղծագործութիւնը հարուստ է
 որոնումների այն արդիւնքներով, որ նա
 է ներդրել հայոց բանաստեղծութեան
 զարգացման պատմութեան մէջ: Նա ստեղ-
 ծել է տաղաչափական նոր ձեւեր,
 բանաստեղծական յանգաւոր տունը՝ լինի
 երկտող, եռտող թէ բառատող: Նարեկացին
 ուսուցիչ է եղել միջնադարեան
 տաղերգուների համար թէ՛ հաւասարատող
 ու յանգաւոր եւ թէ՛ ազատ, խառն
 տողակարգով եւ անյանգ բանաստեղ-
 ծութիւններ գրելու նրանց ստեղծագոր-
 ծական որոնումների ճանապարհին: Նա
 բարերար ազդեցութիւն է ունեցել դասական
 հայ բանաստեղծների բանաստեղծական
 արուեստի կատարելագործման վրայ, եւ
 զարմանալի չէ, որ այսօր էլ դեռ մեզ է
 հասնում նրա ազդեցութեան լոյսի
 շառաւիղը:

(Շարունակելի)

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂԿԻԻՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Էդ. Ջրբաշեան, գրականութեան տեսութիւն, էջ
 818:

2.- Վ. Ներսիսեան, Հայ միջնադարեան
 տաղերգութեան գեղարուեստական միջոցները,
 Երևան, 1976, էջ 289:

3.- Տեառն Յովհաննու Մանգակունւոյ հայոց
 իայրապետի ճառք, Վննտիկ, 1860, էջ 16 եւ 23:

4.- Մ. Արեղեան, հ. Գ, էջ 815:

5.- Նոյն տեղում: